*540.* ***ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿ,*** *պատի մեջ ագուցված փոքր խաչքարի վրա, 1 տող.*

խ աչս մամուն ԽԱՉՍ ՄԱՄՈՒՆ.

*541.* ***Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ.*** *ներսում, արևելյան կամարի վրա.*

Ես Ոհանէս շինեցի եկեղեցիս ի հալալ ինչից իմոց. հայրն իմ Թուման և մայրն իմ Իւսսան, կողակիցն իմ Խանում, հանգուցեալ որդին իմ Ա . . .

Ծանոթ. *Համարում ենք* XVII *դար։*

*Հրատ. Բարխուդարեանց, 122—129։*

*542.* ***Ա. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ.*** *ներսում, նույն կամարի հյուսիսային երեսին.*

Ես Յովհաննէս եպիսկոպոս վերակացու, շինեցի եկեղեցիս. հայրն իմ Տաղտան, մայրն իմ Խոնցի. եւ Եղիա խահանայն, տէր Պօղոս, տանուտէրն Վելիհան. եկեղեցուս վարպետ Կէսբեր, Յակոբ:

Ծանոթ. *Համարում ենք* XVII *դար։*

*Հրատ. Բարխուդարեանց, 123։*

## 47. ՆՆԳԻ ԳՑՈՒՂ

*Գյուղում գտնվող եկեղեցին, համաձայն արձանագրության, կառուցվել է 1858 թ. բայց նրա պատերի մեջ ագուցված հուշարձանների վրա մնացել են երկուսը, որոնք ավելի հին են։*

*543.* ***ԽԱՉՔԱՐ,*** *ագուցված է եկեղեցու հարավային կողմի պատուհանի գըլխին, կողքի, վրան 2 տող.*




Թվ[ին] :ՋՀԲ: (1523):
ԱՂԱ ՄԱՐ . . .

*544.* ***ՏԱՊԱՆԱՔԱՐ,*** *փոքր, ագուցված է արևելյան պատի մեջ, արտաքուստ, 2 տող.*

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄՈՒՐՈՒ ՈՐԴԻ
ՍԱՂԴԱՆԴ ՄԻՐԶԱԻՆ ԹՎՌՄԻԶ ՆԷՐ

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄՈՒՐՈՒ ՈՐԴԻ ՍԱՂԴԱՆԴ ՄԻՐԶԱԻՆ. Թվ[ի]ն. :ՌՄԻԶ: Ն ԷՐ. (1777):

*545.* ***ԽԱՉՔԱՐ,*** *գտնվում է Ննգի գյուղից Պառավաթումբ տանող ճամբին ղանվող ս Գրիգոր Լուսավորիչ կոչվող թաղածածկ եկեղեցու ներսում.*




ԵՍ ԳՐ[Ի]ԳՈՐ| ԿԱՆԳՆԵՑ|Ի ԽԱՉՍ ՀԱՒՐ| ԻՄ|ՈՑ ԳՐ|[Ի]ԳՈՐԻԿԱՑ.| Ս[ՈՒ]ՐԲ ՍՏՐ. Գ[ՐԻ]ԳՈՐ. Թ[Վ]ԻՆ :ՈՀԴ: (1225):

**546. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, *ընկած է ս. Գրիգոր Լուսավորչի բակում. վրան մեկ լուծ եզներ արոր են քաշում, շուրջը՝*



ԽԱՉՍ ՄԱԼՔՈՒՄԻՆ, ՔԱՄԱԼԻՆ:

## 48. ԽԱՉՄԱՍ ԳՅՈՒՂ

*Գյուղամիջում կա մի թաղակապ եկեղեցի, վրան փոքր զանգակատուն. կոչվում է ս. Ստեփանոս, համաձայն ներքոգրեալ արձանագրությունների շինել է ուստա Հուսեփը։*

**547. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *մուտքի բարավորի վրա, 1 տող.*

թվին :ՌՃ: (1651):

*Հրատ. Բարխուդարեանց, 100։*

**548. Ս. ՍՏԵՓԱՆՈՍԻ** *մուտքի արևելյան կողին.*

Ես ուստա Ցուսէփ Եւ Գէւորգ ըսմանա, եկեղեցիս շինեցի յիշատակ. ով որ տեսնոյ, Աստուած ողորմի ասէ:

*Հրատ. Բարխուդարեանց, 100։*

## 49. ՂԱՎԱԽԱՆ ԳՅՈՒՂ

*Եկեղեցին շինված է 1871 թ., բայց գյուղի հյուսիսային կողմում տարածվում է գերեզմանատունը, ուր կանգնած են փոքրիկ մատուռը և մի քանի խաչքարեր։*

**549. ԽԱՉՔԱՐԻ** *վրա.*

թվին :ՋՂԷ: (1548). Ես Շահնուր կանգնեցի խաչս հայր Պախա, մայր իմ Շահմալ . . . . :

*Հրատ. Բարխուդարեանց, 110։*

## 50. ԳԻՇԻ ԳՅՈՒՂ

*Գյուղի եզրին, ձորակի աջ ափին, աղբյուրի մոտ կա մի մատուռ, որը կոչվում է «Ոսկյանց խաչ» և շինված է XIX դարում, բայց մոտի գերեզմանատունն ավելի հին է։*

**550. ԽԱՉՔԱՐԻ** *վրա.*

Այս է տապան Պակնայզարի որդի Աղաբէկ խոխային. :ՌՃՀԲ: (1723):

*Հրատ. Բարխուդարեանց, 120։*

## 51. ԾՈՎԱՏԵՂ ԳՅՈՒՂ

*Գյուղի արևելյան եզրին, բլրի վրա գտնվում է գերեզմանատունը, որի կենտրոնում կառուցվել է Մելիք Փաշայան տոհմի դամբարանատունը։ Հուշարձանների այս վերջին խումբը բաղկացած է եղել երեք իրար կից կիսաղետնափոր մատուռ-դամբանատներից և մի թաղածածկ փոքր եկեղեցուց։ Բոլորի մեջ եղել են մեծ, տափակ և սև քարից շինված գերեզմանաքարեր՝ առանց տապանագրերի, և դրանց գլխին կանգնած նույն քարից խաչքարեր՝ գեղեցիկ քանդակներով ու արձանագրություններով։ Այժմ շենքերի միայն հիմնապատերն են մնացել՝ ներսը լցված քարի և կրաշաղախի բեկորներով։ Մի քանի խաչքարերի վերին մաս-*